# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 014-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 15-ը փետրվարի 2024 թվականի թիվ 2 հերթկան նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 15.02.2024թվականի թիվ 2 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

3. Արենի համայնքի 2023թվականի տարեկան աշխատանքային պլանի կատարման հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին:

4. Արենի համայնքի 2024թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

5. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,0674հա բնակավայրերի նշանակության հողամասը և օրինականացված անասնաշենքը ուղղակի վաճառքով կառուցապատող Վաչիկ Էլբրուսի Սողոմոնյանին օտարելու մասին:

6. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին:

7. Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական աջակցություն ցուցաբերելու մասին:

8. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 0,04հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

9. Արենի համայնքի Արենի և Ռինդ բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելու մասին:

10. Արենի համայնքի ավագանու 18.09.2020թվականի թիվ 101 որոշման 1-ին մասը ուժը կորցրած ճանաչելու և 12.12.2023թվականի թիվ 155-Ա որոշման հավելված 1-ում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

11. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 015-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «ՀՀ վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի» 01/02/2024թ.-ի N 2/փ-58 դրական եզրակացությունները՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.05886 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասի (կադաստրային ծածկագիրը՝ 10-020-0066-0003, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինականացնելու նպատակով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 016-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի 2023թվականի տարեկան աշխատանքային պլանի կատարման հաշվետվությունը ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված 1

Համայնքի ավագանու 15.02.2024թ.

Թիվ 016-Ա որոշման

2023թվականի Տարեկան աշխատանքային պլանի կատարման հաշվետվություն

Ավագանու հարգարժան անդամներ, հարգելի ներկաներ,

Ձեր ուկնդրությանն եմ ներկայացնում 2023թվականի աշխատանքային տարում իրականացրած և տարեկան աշխատանքային պլանում ներառված աշխատանքների մասին ամփոփ տեղեկատվությունը:

2023թվականին ՀՀ Կառավարության կողմից հաստատվել և իրականացվել են հետևյալ սուբվենցիոն ծրագրերը ըստ ոլորտների

1. Խմելու ջրամատակարարման համակարգի կառուցում ոլորտ՝
   հիմնանորոգվել , կառուցվել են կապտաժներ, ջրագծեր Խաչիկ բնակավայրում, ընթացքի մեջ է Ելփին բնակավայրում «Դիդիվան» ջրաղբյուրի կապտաժի կառուցման աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 46.000.000դրամ է, համայնքի ներդրումը՝ 13.800.000դրամ:
   «Սյունիք զարգացում» ՀԿ-ի ենթադրամաշնորհային ծրագրով և «Արմավիրի զարգացում» ՀԿ-ի համաներդրմամբ կառուցվել է 1500գծմ խմելու ջրագիծ Ելփին բնակավայրում:
2. Ոռոգման համակարգի կառուցում ոլորտ՝
   Արենի բնակավայրում՝ «Խաչի տակ» թաղամասում ոռոգման ջրի մղիչ պոմպի կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 36.149.090 դրամ է, համայնքի ներդրումը՝ 10.844.727 դրամ: Սուբվենցիայով պետք է կառուցվեր ոռոգման ջրագիծ Աղավնաձոր բնակավայրում, սակայն շինարարի հետ որոշակի խնդիրների պատճառով տեղափոխվել է 2024թվական:
3. Փողոցների կառուցում/ նորոգում ոլորտ՝
   Ավարտվել են փողոցների հիմնանորոգման աշխատանքները Աղավնաձոր և Արփի բնակավայրերում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 191,500,000 դրամ է, համայնքի ներդրումը՝ 105,325,000դրամ:
   «Արենի » կոմունալ- սպասարկման ՀՈԱԿ-ով իրականացվել են բոլոր բնակավայրերում հանդամիջյան ճանապարհների բարեկարգման և ներբնակավայրային երկրորդական փողոցների խճապատման աշխատանքներ:
4. Նախադպրոցական կրթության ապահովում -
   Կազմակերպվել և իրականացվել են Ագարակաձոր, Աղավնաձոր, Արփի և Ռինդ բնակավայրերում մանկապարտեզների գործունեությունը, որտեղ հաճախել են նաև Արենի,Ելփին և Չիվա բնակավայրերից երեխաներ: Բարեգործությամբ մանկապարտեզի

կառուցման աշխատանքներ են մեկնարկվել Արենի բնակավայրումև սուբվենցիոն ծրագրով Ելփին բնակավայրում:

5. Արտադպրոցական կրթության ապահովում- Կազմակերպվել և իրականացվել են արտադպրոցական կրթույթուն Աղավնաձոր բնակավայրում, ինչպես նաև մեկնարկվել է արտադպրոցական կրթության մատուցում բոլոր բնակավայրերում շրջիկ ավտոբուսի միջոցով:

6.Կրթություն,մշակույթի և երիտասարդների հետ տարվող աշխատանքների բնագավառ՝

Կազմակերպվել են մշակութային միջոցառումներ կապված ազգային տոների, հիշատակի օրերի հետ : Այս բնագավառում՝ Երկրում ստեղծված իրավիճակի պատճառով չեղարկվեցին գաթայի և գինու փառատոնները:

Կազմակերպվել են ամառային ճամբարներ դպրոցահասակ երեխաների համար բոլոր բնակավայրերում, երիտասարդական հավաքներ :

7. Սոցիալական պաշտպանության բնագավառ՝

2023թվականին դրամական օգնություն է տրվել 72 ընտանիքի 2.610.000 ՀՀ դրամ , ամանորյա միջոցառումներ կազմակերպելու և ընտանիքներին անհատապես շնորհավորելու նպատակով ամանորյա փաթեթներ է տրվել ընտանիքի, պատերազմում զոհված կամ վիրավորում ստացած անդամ ունեող ընտանիքներին, վառելափայտ է տրամադրվել 11 ընտանիքի, զիջվել ՝ մանկապարտեզ հաճախող երեխայի ծնողական մուծում: Կազմակերպվել և իրականացվել են բազմաբնյութ աջակցություն Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին, մասնավորապես համայնքում իրականացվող դրամաշնորհայիննծրագրի միջոցներից գնվել է 11տոննա քարածուխ և բաշխվել համայնքում բնակություն հաստատած ընտանիքներին:

Աշխատանքները առավել բազմաբնույթ են և լուծում են տրվել ցանկացած պահի ստեղծված խնդիրներին՝ օգտագործելով համայնքի կարողությունները, միջազգային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և մասնավոր հատվածի ներդրումները:

8. Համայնքում մեկնարկել և ընթացքի մեջ է 250000 եվրո ընդհանուր բյուջեով դրամաշնորհային ծրագիր, որը միտված է տուրիզմի զարգացմանը:

9. Համայնքի առջև դրված խնդիրները լուծելու համար մշտական աշխատանքներ են տարվել համայնքի բյուջեի մուքերը ամբողջովին կատարելու համար:
2023թվականի բյուջեն կատարվել է 104,1 տոկոսով:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 017-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ (ՏԱՊ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հաստատել Արենի համայնքի 2024թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ)՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված
Արենի համայնքի ավագանու
15 փետրվար 2024թ. թիվ 017-Ա որոշման

# ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
# ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ
# 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

| հ/հ | Պարտադիր խնդիր | Գումարը | ԿԶՆ թիրախներ | ԿԶՆ ցուցանիշներ | Ծանոթություն* |
|---|---|---|---|---|---|
| | 3. Համայնքի գույքի կառավարում | 136 953 400 | | | |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 121 953 400 | 11.3 | 11.3.2 | |
| 2 | Սուրադ Սարգսյանի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի շենքի մասնակի նորոգում և ջեռուցման համակարգի վերականգնում | 5 000 000 | 4.3 | 4.3.1 | |
| 3 | Ազարակաձոր, Աղավնաձոր, Արփի բնակավայրերի մանկապարտեզներում արևային պանելների տեղադրում | 10 000 000 | 7.1 | 7.2.1 | ներդրումային ծրագիր |
| | 4. Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակություն | 451 425 950 | | | |
| 4 | Կրթություն /նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների պահպանում/ | 108 000 000 | 4.2 | 4.2.2 | |
| 5 | Ելփին բնակավայրում մանկապարտեզի կառուցում | 343 425 950 | 4.2, 4.ա | 4.2.2, 4.ա.1 | 2023 թվականի սուբվենցիա |
| | 5. Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում | 10 000 000 | | | |
| 6 | Հանգիստ, մշակույթ և կրոն / մարզամշակութային, երիտասարդական միջոցառումներ, փառատոններ և այլն/ | 10 000 000 | 4.1, 4.3 | 4.1.1, 4.3.1 | |
| | 6. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն/17. Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը | 8 000 000 | | | |
| 7 | Սոցիալական պաշտպանություն / խոցելի ընտանիքներին հացեական և թիրախավորված աջակցության տրամադրում/ | 8 000 000 | 3.4, 2.1 | 3.4.2, 2.1.1 | |
| | 7. Համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում | 70 040 000 | | | |
| 8 | Աղավնաձոր բնակավայրի մարզադահլիճի հիմնանորոգում, կահավորում | 70 040 000 | 4.2 | 4.3.1 | Համայնք+դրամաշնորհներ |
| | 9. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում, համայնքի աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովում | 219 587 850 | | | |
| 9 | Արենի բնակավայրում մեքենատրակտորային պարկի կառուցում | 9 517 380 | | | 2024 թվականի սուբվենցիա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Գնիշիկ,Խաչիկ, Չիվա բնակավայրում խմելու ջրի ջրագծերի կառուցում | 92 868 760 | 6.4, 6.բ | 6.4.1, 6.բ.1 | 2024թ. սուբվենցիա |
| 11 | Չիվա բնակավայրում կոյուղու մաքրման հորի կառուցում | 37 201 710 | 6.4,6.բ | 6.4.1,6.բ.1 | 2024թ. սուբվենցիա |
| 10. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում | | **333 271 641** | | | |
| 12 | Ագարակաձոր բնակավայրում 26 փողոցների, Ելփին բնակավայրում 24փողոցների, Չիվա բնավայրում 22փողոցների արտաքին լուսավորման համակարգերի կառուցում | 148 654 860 | 11.2 | 11.2.1 | 2024 թվականի սուբվենցիա |
| 13 | Արենի բնակավայրում մանկապարտեզ տանող 16-րդ և 17-րդ փողոցների կառուցում սալիկապատմամբ | 184 616 781 | 11.2, 11.7 | 11.2.1, 11.7.1 | 2024 թվականի սուբվենցիա |
| 12. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում և իրականացումը | | **3 000 000** | | | |
| 14 | Սեյսմակայունության գնահատման և բարձրացման նպատակով համայնքապատկան շենքերում անհրաժեշտ հետազոտությունների կատարում | 3 000 000 | 11.5 | 11.5.2 | |
| 13. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում | | **72 040 000** | | | |
| 15 | Ագարակաձոր, Խաչիկ, Ռինդ բնակավայրերում ոռոգման համակարգերի կառուցում | 69 040 000 | 6.5 | 6.5.1 | |
| 16 | Ագարակաձոր, Աղավնաձոր, Արենի, Արփի, Գնիշիկ, Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ բնակավարերի հանդամիջյան և արոտավարեր տանող փողոցների բարեկարգում | 3 000 000 | 6.5 | 6.5.1 | |
| 14. Շրջակա միջավայրի պահպանություն | | **121 000 000** | | | |
| 17 | Շրջակա միջավայրի պահպանություն՝ «Արենիի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի պահպանում, աղբահանության, սանիտարական մաքրման աշխատանքների արդյունավետ կազմակերպում,աղբավայրի բարեկարգում | 121 000 000 | 11.6 | 11.6.1 | |
| 15. Համայնքում զբոսաշրջության զարգացման խթանում | | 11 000 000 | | | |
| 18 | Զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծմանն աջակցություն | 5 000 000 | 8.9 | 8.9.2 | |
| 19 | Փառատոների կամակերպում | 6 000 000 | | | |
| 16. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում | | **31 000 000** | | | |
| 20 | Թումո կենտրոնի ստեղծում | 30 000 000 | 4.3, 4.4 | 4.3.1, 4.4.1 | Ներդրումային ծրագիր |
| 21 | Երիտասարդական միջոցառումների, ճամբարների կազմակերպում | 1 000 000 | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | **1 467 318 841** | | | |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 018-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,0674ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ և ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ՎԱՉԻԿ ԷԼԲՐՈՒՍԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,0674հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0018-, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) և օրինականացված շինությունները (անասնաշենք՝ 37,48 քմ և բաց պատշգամբ՝ 12,32քմ)՝ ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով, օտարել կառուցապատող Վաչիկ Էլբրուսի Սողոմոնյանին:

2 Հաստատել հողամասի և շինությունների համար հաշվարկված գումարները.

1) 0.06740հա բնակավայրերի նշանակության հողամասի համար՝ 822 954 ՀՀ դրամ,

2) 49,8քմ անասնաշենքի և բաց պատշգամբի համար՝ 108 375 ՀՀ դրամ,

Ընդամենը՝ 931 329 ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 019-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումը, ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշման հավելվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Գարեգին Սամվելի Սիմոնյանին և Փառանձեմ Սիմոնի Օհանեսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0.173հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0112-0042, հողատեսքը՝ վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 020-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 15 դեկտեմբերի 2017 թվականի «Արենի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց կարգը սահմանելու մասին» թիվ 55-Ն որոշումը և Արենի համայնքի «Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխա ունեցող ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման» հանձնաժողովի դրական եզրակացությունը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 «Սոցիալական հատուկ արտոնություններ» տնտեսագիտական դասակարգման /4729/ այլ նպաստներ հոդվածից Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերել դրամական աջակցություն՝ 480 000 ՀՀ դրամ գումարի չափով:

2. Գումարները հատկացնել վերոնշյալ ընտանիքների անդամներից ներկայացված դիմումատուներին՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Արենի համայնքի ավագանու 15.02.2024
թվականի թիվ 020-Ա որոշման

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ | ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ (ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ) | ԲՆԱԿԱՎԱՅՐ | ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ, ՀԱՇՎԵՀԱՄԱՐ |
|---|---|---|---|---|
| 1. | Պետրոսյան Հերմինե Արտակի | 50 | Արենի | 009250887 |
| 2. | Ծատուրյան Նունե Բուդաղի | 50 | Արենի | AS0599800 |
| 3. | Բաբայան Ալիկ Խաչիկի | 30 | Աղավնաձոր | AR0602408 |
| 4. | Պետրոսյան Սայադ Վոլոդյայի | 30 | Աղավնաաձոր | 012621728 |
| 5. | Օհանյան Շուշիկ Սիրեկանի | 30 | Աղավնաձոր | AU0204580 |
| 6. | Մանուկյան Արմինե Աղվանի | 100 | Արփի | 009430216 |
| 7. | Ավետիսյան Ծաղիկ Սերյոժայի | 80 | Մոզրով | AU0614436 |
| 8. | Աղեկյան Լաուրիկ Աղվանի | 20 | Ելփին | 002872679 |
| 9. | Հայրապետյան Կարապետ Ռաֆիկի | 20 | Ելփին | AL0421313 |
| 10. | Պողոսյան Ռաֆիկ Սամսոնի | 20 | Ելփին | AR0593865 |
| 11. | Հարությունյան Գայանե Նահապետի | 50 | Խաչիկ | 004353660 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 480 | | |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 021-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,04ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 15-րդ մասի, ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2011թվականի թիվ 1920-Ն որոշումը, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Սիմոն Վարդանի Դավթյանի սեփականություն հանդիսացող 0.04 հա (ծածկագիրը՝ 10-004-0115-0013, հողատեսքը այլ հողատեսք) գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, գյուղատնտեսական արտադրական գործառնական դասակարգմամբ՝ անասնաշենք կառուցելու նպատակով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 022-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԵՎ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.17367 հա (ծածկագիրը ՝ 10-008-0124-0010, հողատեսքը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ից ոչ պակաս 300 000 ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.05000 հա (ծածկագիրը ՝ 10-008-0017-, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ Արենի համայնք գյուղ Արենի 31-րդ փողոց 7/1, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ից ոչ պակաս 650 000 ՀՀ դրամ:

3. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.14602 հա (ծածկագիրը ՝ 10-037-0112-0261, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ Արենի համայնք գյուղ Ռինդ 18-րդ փողոց 33, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ից ոչ պակաս 1 000 000 ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 023-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.09.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 101 ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ՄԱՍԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 12.12.2023ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 155-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի և 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ավագանու 18.09.2020թվականի թիվ 101-Ա որոշման 1-ին մասը:

2. Արենի համայնքի ավագանու 12.12.2023թվականի թիվ 155-Ա որոշման հավելված 1-ում կատարել լրացումներ և փոփոխություններ.

1) Հավելված 1-ի աղյուսակի 29-րդ տողում <<113 400>> թիվը փոխարինել <<177 000>> թվով:

2) Ավելացնել նոր 33-րդ տող.

| Հաստիքի անվանումը | բնակավայր | հաստիքային միավորը | աշխատակիցների թվաքանակը | պաշտոնային դրույքաչափը | ընդամենը դրույքաչափ |
|---|---|---|---|---|---|
| ՀՈԱԿ-ի բանվոր | Արենի | 2 | 2 | 145800 | 291600 |

3) Ընդամենը տողը խմբագրել հետևյալ կերպ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | 38,75 | 43 | 5217160 | 5892970 |

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐՔՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 024-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2024թվականի մարտի 1-ին ժամը 15:00-ին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ